Երրորդ հաղորդում

Աստված Իրեն Քրիստոսի մեջ ներկառուցում է մեր էության մեջ

Գրվածքների ընթերցում. Բ Թգ 7:12-14ա, Ա Կրթ 3:9, Եփս 3:14-21, Մտթ 13:3-9, 19-23, Հյտ 21:3, 22

I. Բ Թգ 7:12-14ա-ն մարգարեության բացահայտումն է նախատիպերի միջոցով, որից երևում է, որ մեզ անհրաժեշտ է, որ Աստված Քրիստոսին ներկառուցի մեր խորքային կազմության մեջ, որպեսզի մեր ողջ էությունը Քրիստոսով վերակազմվի՝ Մտթ 16:18, Եփս 3:17.

Ա. Եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի օրգանական կառուցումը, որը տեղի է ունենում հոգևոր նյութափոխանակական գործընթացի միջոցով, իրականում այն է, ինչ Եհովան մարգարեացավ Դավթին Բ Թգ 7:12-14ա-ի նախատիպերի միջոցով. միայն այդ գործընթացի միջոցով մարդիկ կարող են փոխակերպվել Աստծու որդիների, և մարդկային ինչ-որ բան՝ մարդկային սերմը, կարող է դառնալ աստվածային ինչ-որ բան՝ Աստծու որդիներ:

Բ. Որպեսզի Աստծու կառուցումը տեղի ունենա, մենք պետք է ընդունենք, մարսենք և յուրացնենք օրգանական պնևմատիկ Քրիստոսին, ով կենդանարար Հոգին է, որպես մեր հոգևոր սննդի, ըմպելիքի և շնչառության՝ Հվի 6:51, 57, 7:37-39, 20:22.

1. Երբ մենք վայելում ենք «այժմյան» Քրիստոսին՝ Նրան ուտելով, խմելով ու շնչելով, մեր ներսում նյութափոխանակական փոփոխություն է տեղի ունենում, և Քրիստոսը մեր էության կազմության մեջ է ներդրվում՝ Գղտ 2:20, Բ Կրթ 2:15, Փլպ 1:20-21:
2. Աստծու տնտեսությունն Իրեն ներդնելն է մեր մեջ, որպեսզի մենք փորձառաբար ապրենք հոգևոր մարսողության և յուրացման նյութափոխանակական գործընթացը, որը կյանքում աստիճանական և խորքային փոփոխություն է առաջացնում՝ Բ Կրթ 3:18:
3. Այս նյութափոխանակական գործընթացը փոխակերպումն է, իսկ փոխակերպումը կառուցումն է՝ հմմտ Հյտ 21:18, 4:3:

II. Հավատացյալները, որոնք Աստծու կյանքով վերածնվել են Քրիստոսի մեջ, Աստծու անդաստանն են՝ Աստծու նոր ստեղծագործության մեջ եղող մշակահողը, որտեղ Քրիստոս է աճեցվում՝ Աստծու կառույցի համար թանկարժեք նյութեր առաջացնելու համար՝ Ա Կրթ 3:9.

Ա. Աստվածաշնչի համաձայն՝ աճը հավասարազոր է կառուցմանը. այս կառուցումը տեղի է ունենում մեր ներսում կյանքի աստվածային սերմի աճի շնորհիվ՝ Ա Հվի 3:9, Կոլ 2:19, Եփս 4:15-16:

Բ. Եփս 3:17-ը բացահայտում է, որ Եռամեկ Աստված մտել է մեր մեջ, որպեսզի կառուցման աշխատանք կատարի՝ օգտագործելով Իրեն՝ որպես տարրի, ինչպես նաև օգտագործելով մեզ՝ որպես նյութի:

Գ. Սա լուսաբանված է Մտթ 13-րդ գլխի սերմնացանի առակով.

1. Տերն Իրեն՝ որպես կյանքի սերմի, սերմանում է մարդկանց սրտերում՝ հողում, որպեսզի նրանց մեջ աճի ու ապրի և նրանց ներսից արտահայտվի՝ խ. 3:
2. Սերմը սերմանվում է հողի մեջ, որպեսզի հողի սննդանյութերի հաշվին աճի. արդյունքում բերքը համադրություն է և՛ սերմի, և՛ հողի տարրերից՝ խ. 23:
3. Մեր ներսում որոշակի սննդանյութեր կան, որոնք Աստված ստեղծել է որպես նախապատրաստություն Իր՝ մեր մեջ մտնելու և աճելու համար. Աստված ստեղծել է մարդկային հոգին՝ մարդկային սննդանյութերով հանդերձ, ինչպես նաև մարդու սիրտը՝ որպես հող աստվածային սերմի համար՝ հմմտ Ա Պտ 3:4:
4. Մեր՝ կյանքում աճելու արագությունը ոչ թե աստվածային սերմից է կախված, այլ այն բանից, թե որքան սննդանյութ ենք այս սերմին տրամադրում. որքան շատ սննդանյութ մատակարարենք, այնքան սերմն ավելի արագ կաճի և այնքան ավելի կծաղկի՝ Սղմ 78:8, Մտթ 5:3, 8.
   ա. Եթե մենք մնանք մեր շնչում՝ մեր բնական մարդու մեջ, աստվածային սերմի աճի համար որևէ սննդանյութ չի լինի. բայց եթե ներամրապնդվենք մեր ներքին մարդու մեջ և եթե ուշադրություն դարձնենք մեր հոգու վրա ու վարժենք մեր հոգին, սննդանյութերը կմատակարարվեն, և Քրիստոսն Իր տունը կհաստատի մեր սրտերում՝ Եփս 3:16-17, Հռմ 8:6, Ա Տմթ 4:7, հմմտ Հդ 19:
   բ. Եթե ուզում ենք թույլ տալ Տիրոջը՝ որպես կյանքի սերմի, աճել մեր ներսում, որպեսզի Նա մեր լիարժեք վայելքը լինի, պետք է բացարձակորեն բացվենք Տիրոջը և համագործակցենք Նրա հետ՝ մեր սրտի վրա հիմնավոր աշխատանք կատարելու համար՝ Մտթ 13:3-9, 19-23:
5. Մի կողմից՝ Աստված մեզ ամրապնդում է Իրենով՝ որպես տարրով, իսկ մյուս կողմից՝ մենք տրամադրում ենք սննդանյութերը. այս երկու բանի միջոցով Աստված Քրիստոսի մեջ իրագործում է Իր խորքային կառուցումը՝ Իր տան կառուցումը, մեր ողջ էության մեջ:

III. Եփեսացիներին ուղղված թղթի 3-րդ գլխում առաքյալի աղոթքը բացահայտում է, որ Աստծու հավիտենական տնտեսության իրականացման համար մեզ անհրաժեշտ է, որ Հայրն Իր փառքի հարստության համաձայն Իր Հոգու միջոցով մեզ ներամրապնդի ներքին մարդու մեջ, որպեսզի Քրիստոսն Իրեն ներկառուցի մեր սրտերի մեջ՝ զբաղեցնելով մեր ամբողջ էությունը, որպեսզի մենք լցվենք մինչև Աստծու ողջ լեցունությունը՝ խխ. 14-19.

Ա. Ասելը, որ մենք պետք է զորությամբ ներամրապնդվենք ներքին մարդու մեջ, ցույց է տալիս, որ մենք ներքին մարդու մեջ չենք, որ հիմնականում արտաքին մարդու մեջ ենք ապրում՝ խ. 16, 1:19-22, 3:20:

Բ. Քրիստոսն ուզում է զբաղեցնել մեր սրտի յուրաքանչյուր սենյակ.
   1. «Իր տունը հաստատի» արտահայտությունը հունարենում միայն

մեկ բառ է՝ «կատոյկեո», որը հիմնականում նշանակում է «բնակվել», «բնակատեղ հաստատել», իսկ այս բառի նախածանցը՝ «կատա»-ն, նշանակում է «ներքև»՝ խ. 17ա:

2. Երբ Քրիստոսն Իր տունն է հաստատում՝ խորանալով մեր սրտերի մեջ, մենք Աստծու անդաստանի համար արմատավորվում ենք սիրո մեջ և Աստծու կառույցի համար՝ հիմնավորվում սիրո մեջ՝ խ. 17բ:
3. Այն բանին զուգընթաց, որ Քրիստոսը մեր սրտերում Իր տունն է հաստատում, մենք կարող ենք լինում բոլոր սրբերի հետ ըմբռնելու անչափելի Քրիստոսին, ում չափումները տիեզերքի չափումներն են՝ խ. 18.
   ա. Եկեղեցում Քրիստոսի մեր փորձառությունը պետք է խորանարդի պես եռաչափ լինի (լայնություն, երկարություն, բարձրություն և խորություն) և չպետք է գծի պես միաչափ լինի:
   բ. Ե՛վ խորանում, և՛ տաճարում Սրբությունների Սրբությունը խորանարդ էր՝ Ելց 26:2-8, Գ Թգ 6:20:
   գ. Ի վերջո Նոր Երուսաղեմը՝ Աստծու կառույցը, կլինի հավիտենական խորանարդ՝ Սրբությունների Սրբությունը, երեք չափումներում տասներկու հազարական ասպարեզ՝ Հյտ 21:16:
4. Երբ Քրիստոսն Իր տունն է հաստատում մեր սրտերում, դա մեզ թույլ է տալիս ճանաչել Քրիստոսի սերը, որ գիտությունից գերազանց է, որպեսզի մենք լցվենք մինչև Եռամեկ Աստծու ողջ լեցունությունը Նրա ընդհանրական արտահայտության, Նրա փառավորման համար՝ Եփս 3:19-21, հմմտ Ծնդ 24:47, 53, 61-67:

IV. Եթե գիտակցենք, որ Աստված ցանկանում է Իրեն ներկառուցել Իր ընտրյալ մարդկանց մեջ, ապա մեր աշխատանքի նպատակը կլինի ուրիշների մեջ կառուցող և ներկառուցված Աստծուն սպասավորելը, որպեսզի Եռամեկ Աստված Իրեն ներկառուցի նրանց էության մեջ՝ Եփս 3:17ա.

Ա. Տիրոջ վերականգնման մեջ մեր աշխատանքում հանգուցային պահը կառուցող և ներկառուցված Աստծուն սպասավորելն է՝ Մտթ 16:18, Եփս 2:21-22, 3:17ա:

Բ. Մենք պետք է վերանայենք Տիրոջ համար արվող մեր աշխատանքը և հարցնենք, թե որքան Քրիստոս՝ Եռամեկ Աստծու մարմնավորում է ներդրվել նրանց մեջ, ում մենք բերել ենք Տիրոջը՝ Գղտ 4:19, Կոլ 1:28:

Գ. Մենք պետք է մեկ բան կիրարկենք՝ պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստծուն սպասավորենք ուրիշների մեջ, որպեսզի Նա Իրեն ներկառուցի նրանց ներքին մարդու մեջ. մենք պետք է աղոթենք, որ Տերը մեզ սովորեցնի այսկերպ աշխատել՝ Բ Կրթ 13:14, Ա Կրթ 3:9ա, 10, 12:

Դ. Երբ կառուցում ենք եկեղեցին պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստծով, իրականում ոչ թե մենք ենք կառուցում, այլ Աստված է կառուցում մեր միջոցով՝ մեզ որպես Իրեն ուրիշների մեջ բաշխելու և փոխանցելու միջոց օգտագործելով՝ Գրծ 9:15, Ա Կրթ 14:4բ, Բ Կրթ 3:3-6:

Ե. Երբ մենք այսօր աշխատում ենք Աստծու համար, պետք է մասնակցենք Աստծու կառուցմանը, որի ժամանակ աստվածային տարրը ներդրվում է մարդկային տարրի կազմության մեջ, իսկ մարդկային տարրը՝ աստվածային տարրի կազմության մեջ՝ Հվի 14:20, 15:4ա, Ա Հվի 4:15:

Զ. Այն բանին զուգընթաց, որ աստվածային տարրը ներդրվում է մեր մարդկայնության կազմության մեջ, մենք դառնում ենք Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ, և այն բանին զուգընթաց, որ մարդկային տարրը ներդրվում է Աստծու կազմության մեջ, Աստված դառնում է մարդ. սա Նոր Կտակարանում բացահայտված կառույցն է՝ Եփս 2:21, 4:16:

Է. Տիրոջ վերականգնման մեջ մեր աշխատանքը պետք է լինի այս փոխադարձաբար կազմվելու մասը.

1. Եթե մեր աշխատանքը կապված չէ այս փոխադարձ կազմության հետ, ապա Աստծու աչքին մեր աշխատանքը նման է փայտի, խոտի և ծղոտի՝ Ա Կրթ 3:12:
2. Եթե մեր աշխատանքն այս փոխադարձ կազմության մասն է, Աստված մեր աշխատանքը կհամարի ոսկի, արծաթ և թանկագին քարեր, որոնք կավարտունանան Նոր Երուսաղեմում՝ Հյտ 21:2, 10-11, 18-21:

Ը. Երբ մենք ջանում ենք իրականացնել Աստծու նախասահմանած ճանապարհը՝ ծնելու, սնելու, կատարելագործելու և կառուցելու դրա չորս քայլերով, մեր աշխատանքը պետք է հիմնված լինի պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստծու վրա, ով Իրեն ներկառուցում է Իր ընտրյալ մարդկանց մեջ և նրանց ներկառուցում է Իր մեջ:

Թ. Եթե մենք ուրիշներին կառուցող և ներկառուցված Աստծուն ենք սպասավորում՝ աստվածային կյանքում նրանց աճի համար, մենք կառուցում ենք Քրիստոսի Մարմինը, որը կավարտունացնի Նոր Երուսաղեմը՝ Կող 2:19, Եփս 4:15-16, Հյտ 21:10:

V. Ի վերջո Եռամեկ Աստված և փրկագնված մարդկայնությունը կմիաձուլվեն, կմիախառնվեն և կկառուցվեն՝ որպես մեկ ամբողջություն՝ Նոր Երուսաղեմը՝ խխ. 2, 10.

Ա. Նոր Երուսաղեմը կառուցվում է այն բանի շնորհիվ, որ Աստված Իրեն ներդնում է մարդու կազմության մեջ, որպեսզի մարդուն դարձնի նույնը, ինչ Աստված, կյանքով, բնությամբ և կազմությամբ, այնպես, որ Աստված ու մարդը ընդհանրական ամբողջություն դառնան՝ խխ. 18-21:

Բ. Նոր Երուսաղեմը իրար հետ որպես մեկ ամբողջություն միաձուլված, միախառնված և համակառուցված աստվածայնության ու մարդկայնության համադրություն է. բոլոր բաղադրիչներն ունեն նույն կյանքը, բնությունը և կազմությունը, ուստի և ընդհանրական անձ են՝ խխ. 3, 22.

1. «Աստված մարդու, մարդն Աստծու/ Կացարան են փոխադարձ./ Իր լիությամբ մարդու մեջ/ Արտահայտվում է Աստված»՝ Օրհներգ 718, 9-րդ տուն:

2. Աստված և մարդը, մարդը և Աստված կառուցվում են և միախառնվում ու միաձուլվում. սա Աստծու կառույցի ավարտունությունն է:

Գ. Նոր Երուսաղեմը կազմություն է Աստծուց ու մարդուց և մարդուց ու Աստծուց, որոնք ներդրված են միմյանց կազմության մեջ և մեկ ամբողջություն են կազմում՝ Հյտ 22:17ա, 21:3, 22.

1. Դա մարդկայնության մեջ արտահայտված աստվածայնությունն է և աստվածայնության մեջ փառավորված մարդկայնությունն է, ինչի արդյունքում աստվածային փառքը լուսափայլորեն ճառագում է մարդկայնության մեջ՝ խ. 11:
2. Երկուսը՝ աստվածայնությունն ու մարդկայնությունը, փոխադարձ բնակատեղ են դառնում.
   ա. Նա, ով Աստված է, բայց և մարդ, բնակվում է նրա մեջ, ով մարդ է, բայց և Աստված:
   բ. Նա ով մարդ է, բայց և Աստված, բնակվում է Նրա մեջ, ով Աստված է, բայց և մարդ:

Դ. Մարդկային տարրի մեջ աստվածային տարրի և աստվածային տարրի մեջ մարդկային տարրի կազմության մեջ ներդրվելու արդյունքում առաջացած այս փոխբնակատեղը տիեզերքի կենտրոնն ու իրականությունն է՝ խխ. 1-2, 22, հմմտ Ժղվ 1:2:

Ե. «Պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստված Իր ցանկության բարեհաճության համաձայն և Իր տնտեսության բարձրագույն մտադրության համար Իրեն ներկառուցում է Իր ընտրած մարդկանց մեջ և Իր ընտրած մարդկանց՝ Իր մեջ, որպեսզի Քրիստոսի մեջ կազմություն ստանա՝ որպես աստվածայնության և մարդկայնության միաձուլում, որը կդառնա Նրա օրգանիզմը և Քրիստոսի Մարմինը՝ որպես Իր հավիտենական արտահայտությունն ու փոխադարձ կացարանը փրկագնող Աստծու և փրկագնված մարդու համար: Այս հրաշալի թանկագին կառուցվածքի վերջնական ավարտունությունը կլինի Նոր Երուսաղեմը հավիտենապես»՝ փորագրություն Վիթնես Լիի գերեզմանաքարի վրա:

© 2023 Living Stream Ministry